# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 09.03.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N << ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«30» մարտի 2017թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵԳՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Շախմուրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.03.2017թ. կնքված N <<ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

***Կողմերը որոշեցին***

1.1 Պայմանագրի 4.2 կետում <<սակայն ոչ ուշ, քան 28.12.2017թ.:>> բառերը փոխարինել <<սակայն ոչ ուշ, քան 30.12.2017թ.:>> բառերով:

1.2 Պայմանագիրը լրացնել 7.10 կետով՝ հետևյալ խմբագրությամբ <<Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:>>:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ՄԵԳՆԱ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե ք. Երևան, Կոմիտաս 47, |
| ՀՎՀՀ՝ 02583241 | իրավ.հասցե՝ Ն. Տիգրանյան 1,փակուղի 1 |
| Հ/Հ՝ 900011192151 | ՀՎՀՀ՝ 00083019 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ՝ 002-080588001 |
| | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| **Ղեկավար՝ Կ. Փոլադյան** | **Տնօրեն՝ Ա.Շախմուրադյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | |